# ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

## ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

*Ծննդոց 2:3 – Աստված օրհնեց յոթերորդ օրը և **<u>սրբագործեց</u>** այն, որովհետև այդ օրը հանգստացավ իր բոլոր գործերից, որ Աստված ստեղծեց ու արեց:*

*Եփ. 1:4 – ինչպես որ մեզ նրա միջոցով ընտրեց աշխարհի ստեղծումից առաջ, որպեսզի մենք <u>սուրբ</u> և <u>անարատ</u> լինենք նրա առաջ սիրո մեջ:*

*Ա Թես. 4:3 Քանի որ Աստծու կամքը սա է՝ <u>ձեր սրբությունը</u>:*

***Սրբություն, ἁγιάζω – hagiazō – 29x – առանձնացված լինել, զատվել:***

*Ա Կորնթացիներին 1:1-2 – Պողոսը՝ Աստծու կամքով Հիսուս Քրիստոսի առաքյալ լինելու կանչված, և Սոսթենես եղբայրը՝ Աստծու եկեղեցուն, որ Կորնթոսում է, Քրիստոս Հիսուսով **<u>սրբագործվածներին</u>**՝ <u>կոչված սրբեր լինելու</u>, բոլոր նրանց հետ, որոնք ամենուրեք կանչում են անունը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ նրանցն է և մերը.*

- ***Կորնթոսի եկեղեցին բազմաթիվ խնդիրներ ուներ, և Պողոս առաքյալն իր նամակում անդրադարձավ առնվազն 10 խնդրի:***

    - *Եկեղեցու ուսուցիչների հետ կապված տարաձայնություններ,*
    - *Սեռական անբարոյականություն,*
    - *Միմյանց դեմ դատական խնդիրներ,*
    - *Ամուսնության, ամուրիություն և բաժանման հարցեր*
    - *Հոգևոր պարգևների թյուրիմացություն,*
    - *Տիրոջ ընթրիքի չարաշահում,*
    - *Կուռքերին զոհաբերված սննդի հետ կապված տարաձայնություններ,*

    *Ա Կորնթացիս 6:11 – Եվ ձեզնից ոմանք այսպիսին էին, բայց <u>լվացվեցիք</u>, բայց <u>սրբագործվեցիք</u>, բայց <u>արդարացվեցիք</u> Տեր Հիսուս Քրիստոսի անունով և մեր Աստծու Հոգով:*

## ԱՐԴՅՈ՞Ք ԻՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ:

***Սուրբ գրության համաձայն՝ Այո:***

*11 Եվ ձեզնից ոմանք այսպիսին էին, բայց **<u>լվացվեցիք</u>**, բայց **<u>սրբագործվեցիք</u>**, բայց **<u>արդարացվեցիք</u>** Տեր Հիսուս Քրիստոսի անունով և մեր Աստծու Հոգով:*

*Հռո. 8:17 – Եվ եթե որդիներ ենք, ապա նաև ժառանգներ, Աստծու ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ, որպեսզի եթե **x40** նրա չարչարանքներին կցորդ ենք, փառքին էլ հաղորդակից լինենք:*

- ***Այսօր ես խոսելու եմ փոխակերպված կյանքի մասին երեք տարբեր փուլերում:***

## I. ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆՈՒՄ ԴԻՐՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ):

*Որովհետև Աստված նրան, որ մեղքը չէր ճանաչում, մեզ համար մեղավոր արեց, որպեսզի մենք նրանով Աստծու արդարները լինենք (Բ Կոր. 5:21):*

*Իսկ մենք ամեն ժամ պարտավոր ենք Աստծուն գոհություն հայտնել ձեզ համար, Տիրոջից սիրվա՛ծ եղբայրներ, որովհետև Աստված փրկության համար սկզբից ձեզ ընտրեց Հոգու սրբացմամբ ու ճշմարտության հավատով, (Բ Թես. 2:13)*

## II. ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆՈՒՄ ՊՐՈԳՐԵՍԻՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ՍՐԲՈՒԹՅՈՒՆ):

*1 Թես. 5:23 - Եւ ինքը խաղաղութեան Աստուածը ձեզ **սուրբ անէ բոլորովին**. եւ ձեր բոլոր հոգին եւ շունչը եւ մարմինը անարատ պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալը:*

- ***Հիմա հարցն այն է, որ եթե լվացվել, սրբացվել և արդարացել ես, ինչի՞ց պետք է սրբագործվես:***

1) ***Սրբացումը նախ և առաջ Աստծո գործն է անհատի կյանքում:***
   ***Արդարացումը Աստծո գործն է ՄԵԶ ՀԱՄԱՐ: Սրբացումը Աստծո գործն է ՄԵՐ ՄԵՋ:***

2) ***Սրբացումը նշանակում է, որ դուք կաճեք, դուք կառաջադիմեք, որովհետև Աստծո շնորհի աշխատանքը միշտ արդյունավետ է:***

   *Բ Կոր. 3:18 – Բայց մենք ամենս՝ բաց երեսով Տիրոջ փառքն ինչպէս հայելու մէջ տեսնելով՝ նոյն պատկերի նման **կերպարանափոխվում ենք** փառքից դէպի փառք, ինչպէս թէ Տիրոջ Հոգուցը:*

3) ***Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չճնշենք մարդկանց կամ չպարտադրենք մեր սրբությունը ուրիշներին ակնկալիքների միջոցով:***

   *Ա Հովհաննես 3:2-3 – **2** Սիրելինե՛ր, այժմ Աստծու որդիներ ենք, և տակավին հայտնի չէ, թե ի՛նչ պիտի լինենք, բայց գիտենք, որ երբ նա հայտնվի, նրա նման կլինենք, որովհետև կտեսնենք նրան, ինչպես որ է: **3** Եվ ամեն ոք, ով այս հույսն իր մեջ ունի, իր անձը մաքրում է, ինչպես որ նա է մաքուր:*

   ***Իսկ ինչպե՞ս ենք մաքրում մեր անձը:***

   *Սրբացրո՛ւ նրանց քո ճշմարտությամբ. քո **խոսքը** ճշմարտություն է (Հովհ. 17:17):*

   *որպեսզի նրան սրբացնի՝ մաքրելով ջրի ավազանով՝ **խոսքով**, (Եփ. 5:26):*

## III. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՊՏՈՒՂԸ ՍՈՒՐԲ ԿՅԱՆՔՈՎ ԱՊՐԵԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆ Է:

*Բայց հիմա, որ մեղքից ազատված եք և Աստծու ծառա եք դարձել, **sրբագործվելու** համար ձեր պտուղն ունեք, և դրա վերջը հավիտենական կյանքն է (Հռ. 6:22):*

*Եփ. 1:4 – ինչպես որ մեզ նրա միջոցով ընտրեց աշխարհի ստեղծումից առաջ, որպեսզի մենք սուրբ և անարատ լինենք նրա առաջ սիրո մեջ:*

*Բոլորի հետ հետամո՛ւտ եղեք խաղաղության և սրբության, առանց որի ոչ ոք Տիրոջը չի տեսնի (Եբր. 12:14):*

*ըստ Հայր Աստծու կանխագիտության, Հոգու սրբագործության, հնազանդվելու և Հիսուս Քրիստոսի արյունով մաքրվելու համար. թող շնորհն ու խաղաղությունը շատանան ձեզ վրա (Ա Պետրոս 1:2):*

*Այլ ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սո՛ւրբ եղեք ձեր բոլոր վարքերում, որովհետև գրված է. Սո՛ւրբ եղեք, որ Ես սուրբ եմ (Ա Պետր. 1.15, 16):*

## ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ